ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ
Ճարտարապետության դոկտոր

ԹԲԻԼԻՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի հայկական գաղթօջախների մասին առաջին պատմական տեղեկությունները հանդիպում են արդեն վաղ միջնադարում: Պատմիչ Ուխտանեսը հիշատակում է այդ ժամանակաշրջանում Ցուրտավում գոյություն ունեցող հայկական գաղթօջախը[1]: Հայ բնակչության առաջին նշանակալից գաղթերը դեպի Վրաստան, ըստ Ղեւոնդ պատմիչի, տեղի են ունեցել 8-րդ դ., երբ 703, 774 եւ 775 թթ. արաբները ճնշել են իրենց դեմ Հայաստանում բռնկված ապստամբությունները[2]: 9-րդ դ. Տփղիսի հայ բնակիչները վրացիների հետ համատեղ պաշտպանել են քաղաքը արաբական Բուղա վայրագ զորավարի ասպատակություններից (853 թ.)[3]:

Հայերի զանգվածային գաղթը դեպի Վրաստան սկսվում է Բագրատունյաց հայկական թագավորության վերացումից եւ Անիի անկումից հետո, երբ հայ ավատատերերի համար անկախ Վրաստանը դարձավ հենարան եւ պատվար՝ օտար տիրապետողներից հայրենի հողն ազատագրելու համար մղվող պայքարում: Դավիթ Շինարար թագավորի օրոք (1083-1125 թթ.) Անիից մեծաքանակ հայեր տեղափոխվեցին Վրաստան, որոնց բնակության համար առանձին քաղաք հիմնվեց՝ Գորին, բազմաթիվ հայկական եկեղեցիներով եւ վանքերով[4]:

Արդեն Թամարա թագուհու օրոք (1184-1213թթ.) հայերը Վրաստանում ազդեցիկ դիրք ունեին եւ կարեւոր դեր էին խաղում երկրի քաղաքական եւ տնտեսական կյանքում, ինչպես նաեւ ռազմական բնագավառում: Այսպես, օրինակ, այդ շրջանում Վրաստանի զորքերի գլխավոր հրամանատարը՝ ամիրսպասալարը, հայ իշխան Զաքարե Երկայնաբազուկն էր, իսկ երկրի քաղաքացիական իշխանությունը (աթաբեկությունը) գլխավորում էր նրա եղբայրը՝ Իվանեն[5]:

Հայ բնակչության գաղթը դեպի Վրաստան շարունակվում է Հայաստանը մոնղոլների կողմից գրավվելուց եւ երկրում հարկային ծանր վարչակարգ սահմանելուց հետո եւս[6]:

17-18-րդ դդ. Վրաստանում, Թբիլիսիից բացի, խոշոր հայ գաղթօջախներ գոյություն ունեին Գրեմիում, Գորիում, Քանդայում, Վակայում, Դիրբիում, Նաբաթխեւիում, Ալիում, Ուպլիսցիխեում, Սուրամում, Ախալգորիում, Անանուրում, Թելավում, Սղնախում եւ այլ բնակավայրերում, որտեղ այսօր էլ պահպանվել են հայերի կառուցած բազմաթիվ եկեղեցիները:

---

1 **Ուխտանէս եպիսկոպոս**, Պատմութիւն բաժանման հայոց եւ վրաց, Վաղարշապատ, 1871, մասն Բ, էջ 32-33:

2 «**Պատմութիւն Ղեւոնդայ**», Ս.Պետերբուրգ, 1887, էջ 35, 138-139:

3 «Արաբացի մատենագիրները Հայաստանի մասին», հավաքեց Բ. Խալաթյանց, Վիեննա, 1919, էջ 100:

4 **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Երեւան, 1991, էջ 356:

5 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 3, Երեւան, 1976, էջ 529-541:

6 **Ա. Գ. Աբրահամյան**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երեւան, 1964, էջ 99:

Պետք է նշել, սակայն, որ հայ ճարտարապետները եւ քարգործ վարպետներն աշխատել են Վրաստանում դեռեւս վաղ միջնադարում: Այսպես, օրինակ, հայ ճարտարապետ Թոդոսակը 7-րդ դ. կառուցել է Աթենի Ս. Սիոն «հռիփսիմեատիպ» եկեղեցին, իսկ հայ շինարարները, Թոդոսակի մասնակցությամբ, կառուցել են Մցխեթի Ս. Խաչ («Ջվարի») եկեղեցին[7]:

* * *

Վրաստանի հայկական խոշորագույն գաղթօջախը գոյատեւել է Թբիլիսիում: Արդեն 12-րդ դ. յոթանասունական թվականներին Թբիլիսին դառնում է Վրաստանի՝ Հայ Առաքելական Եկեղեցուն դավանող հավատացյալների թեմական կենտրոն[8]: 13-րդ դ. Տփղիսում է հաստատվում հայ մեծահարուստ Պարոն Ումեքը Երզնկայից, որը Վրաստանի մայրաքաղաքում առեւտրատնտեսական լայն գործունեություն է ծավալում[9]: Ումեքն այնտեղ կառուցում է Կաթողիկե Ս. Աստվածածին (այժմ՝ Ս. Գեւորգ) եկեղեցին: Ումեքի որդի իշխան Կարիմադինի հրավերով Հայաստանից ժամանած հռչակավոր իմաստասեր Հովհաննես Երզնկացին 1284 թ. այստեղ բանախոսել է երկնային մարմինների շարժման, ինչպես նաեւ օդերեւութաբանական թեմաներով[10]:

Ումեքի թոռներ Սուջահաթը, Առյուծը եւ Ջալապը 14-րդ դ. սկզբին Տփղիսի կենտրոնական մասում կառուցում են Հարանցվանք (կոչվում է նաեւ Փաշավանք) հայկական վանքի տաճարը[11]: Թբիլիսիում 14-րդ դ. արդեն մի շարք հայկական եկեղեցիներ գոյություն ունեին. բացի Կաթողիկեից եւ Հարանցվանքից, պատմիչները հիշատակում են նաեւ Ս. Բեթղեհեմ, Հրեշտակապետաց, Քառասնից մանկանց, Մուղնու Ս. Գեւորգ եւ այլ եկեղեցիները[12]: Նրանք միաժամանակ հայտնի մշակութային կենտրոններ էին. մեզ են հասել այդ եկեղեցիներում գրված բազմաթիվ ձեռագրեր[13]:

Տփղիսում հայերի շինարարական - ճարտարապետական գործունեությունը առանձնապես աշխույժ էր ուշ միջնադարում, երբ, վերը նշվածներից բացի, կառուցվեցին երկու տասնյակ հայկական նոր եկեղեցիներ: Այդ ժամանակաշրջանի Թբիլիսիում հանդիպում ենք հայազգի դիվանագետների, պետական եւ ռազմական գործիչների՝ Բեկտաբեկյաններ, Ղորղանյաններ, Արղության-Երկայնաբազուկներ, Թումանյաններ, Բեհբությաններ եւ ուրիշներ[14]: Իսկ վրաց թագավորների օրոք միջնադարից մինչեւ 18-րդ դ. վերջը Թիֆլիսի քաղաքագլուխը ավանդաբար հայ էր նշանակվում, որը պատճառաբանված էր քաղաքում հայ

7 Տես **П. М. Мурадян,** Армянская эпиграфика Грузии. Картли и Кахети, Ереван, 1985, էջ 14-43, 93-113:

8 **Մ. Չամչեանց**, Պատմութիւն հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 132:

9 **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1909, էջ 349:

10 **Յովհաննէս Երզնկացի**, Յաղագս երկնային շարժմանն, Նոր-Նախիջեւան, 1792, էջ IX-X:

11 Տեսս **Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ**, Վին Թբիլիսիի եւ հայ-վրացական կուլտուրական կապերի պատմությունից, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, թ. 3:

12 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց **Լ. Խաչիկյան,** մասն առաջին, Երեւան, 1955, էջ 120, 384, 425: Մասն 3, Երեւան, 1967, էջ 420, 475, 488:

13 **Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ,** նշվ. աշխ., էջ 156:

14 **Ш.Чхетия**, Армяне в Тбилиси в шестидесятых годах XIX века, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, թ. 3, էջ 161:

բնակչության գերակշռող քանակով[15]: Ինչպես գրում է ֆրանսիացի հայտնի ճանապարհորդ Տուրնեֆորը, 18-րդ դարում Թբիլիսիի 20000 բնակչից 14000-ը հայեր էին, 3000-ը՝ մահմեդական, 2000-ը՝ վրացի, 500-ը կաթոլիկ, ընդ որում այս վերջիններս դավանափոխ հայեր էին[16]:

Համաձայն «Թիֆլիս քաղաքի 1803 թ. հունվարի դրությամբ բնակչության, շենքերի եւ ամրությունների հաշվեհամարի»՝ 18-19-րդ դդ. սահմանագլխին քաղաքում արդեն կար 24 հայկական եկեղեցի[17]: Բացի եկեղեցիներից՝ հայերը Թիֆլիսում կառուցում էին նաեւ բնակելի եւ հասարակական շենքեր: Այսպես, օրինակ, իտալացի ճանապարհորդ Ալեքսանդր Նեգրին նշում է, որ 19-րդ դարի սկզբին քաղաքի երկու հազար բնակելի տներից մոտ 1800-ը պատկանում էին հայերին[18]:

Հայկական եկեղեցիներ կային հին Թիֆլիսի բոլոր թաղամասերում (Քարափիթաղ, Հավլաբար, Կուկիա, Ճուղուրեթ, Խարփուխ): Սակայն Թիֆլիսի 19-րդ դ. կազմած հատակագծի վրա, որտեղ նշված են բոլոր 24 հայկական եկեղեցիները, երեւում է, որ նրանց մեծ մասը գտնվում է քաղաքի կենտրոնական մասում:

Այժմ նրանցից պահպանվել է 14-ը (մնացածները քանդվել են 20-րդ դ. 30-ական թվականներին, որոնց թվում նաեւ Հարանցվանքը):

Թբիլիսիի մեզ հասած հայկական հնագույն եւ այսօր գործող Ս. Գեւորգ Մայր եկեղեցին ըստ շինարարական արձանագրության կառուցվել է 1251թ.՝ «Ծինեցաւ Կաթողիկե եկեղեցին արդեամբ իշխանի Հայոց Ումեքայ: Ի Թուին Հայոց Չ»[19]: Սակայն, փաստորեն, այդ եղել է ավելի հին եկեղեցու հիմնովին վերաշինում, որովհետեւ հայկական միջնադարյան ձեռագրերից մեկի հիշատակարանում նշված է Թբիլիսիում 1037 թ. Ս. Աստվածածին մենաստանի կառուցման մասին[20]:

Նարիկալա բերդի ստորոտում կանգուն Սուրբ Գեւորգ Մայր եկեղեցին, (այստեղից է նրա նաեւ «Բերդի Մեծ եկեղեցի» անունը) հետագայում եւս վերանորոգումներ է ունեցել, բայց պահպանել է իր սկզբնական ճարտարապետական հորինվածքը: Այն պատկանում է վաղ միջնադարում հայկական շինարարական արվեստի ստեղծած «գմբեթավոր դահլիճ» տիպի եկեղեցիների 11-13-րդ դդ. այն ենթատիպին, որն ունի միայն մեկ զույգ գմբեթակիր որմնամույթեր[21]: Այստեղ աղոթասրահը (11.7x13 մ) արեւելքում ավարտվում է եռյակ լուսամուտներով Ավագ խորանով, որի երկու կողքին աբսիդներով ավանդատներն են: Եկեղեցու արեւելյան ճակատն ունի միջնադարյան հայկական ճարտարապետությանը բնորոշ զույգ եռանկյունաձեւ խորշեր: Մուտքերը երկուսն են՝ արեւմտյան ու հյուսիսային կողմերից: Հարավային եկեղեցիներում գրեթե պարտադիր մուտքի բացակայությունը պայմանավորված է տեղանքի եւ շրջակա կառուցապատման առանձնահատկություններով:

Ս. Գեւորգ Մայր եկեղեցին, ինչպես եւ Թիֆլիսի հայկական եկեղեցիների մեծ մասը, կառուցված է աղյուսով: Հարավային պատի մոտ արտաքուստ կատարված մասնակի պե-

15 Անդ, էջ 161-162:
16 **Մ. Полиевктов**, Г. Натадзе, Старый Тифлис в известиях современников, Тифлис, 1929, с. 30.
17 Անդ, էջ 65:
18 Անդ, էջ 74:
19 **Ռ. Մ. Мурадян**, Армянская эпиграфика Грузии, Тбилиси, с. 22.
20 Անդ, էջ 21:
21 **Մ. Մ. Асратян**. Памятники средневековой армянской архитектуры в Тбилиси, Ереван, 1978, с. 4.

ղումները պարզեցին, որ աղյուսաշեն պատերը դրված են սրբատաշ կարմիր տուֆից շարված ասպիճանաձեւ որմնախարսխի վրա: Եկեղեցու ներկայիս գմբեթը 17-րդ դ. վերանորոգման արդյունք է[22]:

Ս. Գեւորգ Մայր եկեղեցու ներսը զարդարված է 18-րդ դ. որմնանկարներով, որոնք բացվել են 1976 - 77 թթ. նորոգման աշխատանքների ժամանակ, երբ հեռացվել են պատերի՝ ուշ շրջանի գաջի եւ յուղաներկի շերտերը: Գմբեթին պատկերված է աղավնակերպ Ս. Հոգու եւ Սերովբեների հետ Քրիստոսը՝ բազմած ամպերի վրա, Սուրբ Սեղանի կամարի ձախակողմյան մասում Ս. Աբգարն է Քրիստոսի անձեռագործ դաստառակով, աջակողմյան մասում՝ Ս. Տրդատը, հյուսիսային պատին պատկերված են Ավետումը, Եղիսաբեթը ողջունում է Ս. Աստվածածնին եւ սաղմոսասաց Դավիթը հալածվում է Սավուղ թագավորից, հարավային պատին նկարված են Քրիստոսի Ծնունդը եւ Մկրտությունը[23]: Գեղարվեստական մտածողության, գունային կառուցվածքի եւ ոճական առանձնահատկությունների հիման վրա այս որմնանկարները վերագրվում են Հովնաթան Հակոբի Հովնաթանյանի վրձնին (18-րդ դ.) եւ հանդիսանում նշանակալից երեւույթ հայ կերպարվեստի պատմության մեջ[24]:

Ընդհանրապես Թբիլիսիի Ս. Գեւորգ Մայր եկեղեցին բացառիկ կապ ունի հայ մշակույթի հետ. նրա կողքին են թաղված հայ ժողովրդի մեծ զավակները՝ Սայաթ-Նովան եւ Գեւորգ Բաշինջաղյանը: Այստեղ են պահվում նաեւ Հովնաթան Հովնաթանյանի «Աստվածամայրը» եւ Մկրտում Հովնաթանյանի «Օրհնող Քրիստոսը» նկարները, ինչպես նաեւ Բաշինջաղյանի մի շարք մեծադիր կտավները՝ Քրիստոսի երկրային կյանքի թեմաներով:

Կաթողիկեից հետո հնագույն հայկական եկեղեցին Թբիլիսիում եղել է 14-րդ դ. հիմնված Հարանցվանքի (կոչվում է նաեւ Փաշավանք) տաճարը, որը իր չափերով քաղաքի խոշորագույն եկեղեցական շենքն էր: Այն երկու անգամ վերակառուցվել է՝ 1482 թ. եւ 1789 թ., երբ վանքի Ղազար վանահայրը «...նորոգեաց զեկեղեցիս ի ներքուստ եւ յարտաքուստ եւ գեղանկար յօրինուածովք շքեղազարդեաց...»[25]: Վանքի համալիրի մեջ էին մտնում նաեւ վանահոր երկհարկանի շենքը, բնակելի սենյակները, եռահարկ զանգակատունը, պարիսպը[26]: Այժմ պահպանվել են զանգակատունը եւ վանահոր շենքը (վանքը քանդվել է 1930-ական թթ.): Աղյուսից կառուցված տաճարն ունեցել է եռանավ գմբեթավոր բազիլիկայի հորինվածք երեք զույգ մույթերով, ընդ որում բոլոր նավերն էլ արեւելքում ավարտվում են կիսաշրջանաձեւ, հավասար մեծության խորաններով, որոնք, սակայն, արտաքին պատերի ուղղանկյուն եզրագծից դուրս չեն գալիս: Այս երեք խորաններից միջինը նվիրված էր Ս. Աստվածածնին, հարավայինը՝ Ս. Գրիգոր Լուսավորչին, իսկ հյուսիսայինը՝ Ս. Առաքելոց[27]: Տաճարը ամբողջությամբ, սակայն, անվանվում էր Ս. Աստվածածին[28]: Նրա առանձին, երկթեք տանիքներով ծածկված նավերը հատվում էին խորանների առջեւ տրանսեպտով, որը պսակված էր երեք գմբեթներով: Այսպիսի հորինվածքը եզակի է հայկական միջնադարյան ճարտարապետության մեջ:

---

22 **Ш. Амиранашвили**, Древности Тифлиса. Тифлис и его окрестности, Тифлис, 1925, с. 186.

23 «Եկեղեցական վերանորոգչական աշխատանքներ վիրահայոց թեմում», «Էջմիածին», 1979, Գ, էջ 63:

24 **Մ. Ղազարյան**, Նորահայտ որմնանկարներ, «Գրական թերթ», 1977, թ. 50, էջ 4:

25 **Ս. Ջալալեանց**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Թիֆլիս, 1853, էջ 59:

26 Անդ:

27 **Լ. Մ. Մելիքսեթ - Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, հ. 3, Երեւան, 1955, էջ 265:

28 **Ս. Ջալալեանց**, նշվ. աշխ., էջ 59:

Տաճարի բավականին մեծ այս գմբեթներն ունեին բարձր, սլացիկ, փասներկու նիստանի թմբուկներ՝ բրգաձեւ վեղարով: Հարավային մուտքի առջեւ (կային մուտքեր նաեւ հյուսիսից եւ արեւմուտքից) կցված էր քառասյուն շքամուտք: Տաճարի ընդարձակ աղոթասրահը լուսավորվում էր համեմատաբար փոքր պատուհաններով: Խորաններն ունեին մեկական լուսամուտ արեւելյան ճակատում: Երեք ճակատները (արեւելյան, հյուսիսային եւ հարավային) ունեին կտրվածքում կիսաշրջանաձեւ խորշեր: Ընդերկայնական պատերի՝ տրանսեպտին համապատասխան հատվածները զարդարված էին կամարաշարով: Արտաքուստ տրանսեպտը շեշտված էր ճակտոններով նաեւ հյուսիսային եւ հարավային պատերում: Գմբեթի թմբուկի բոլոր նիստերն ունեին բարձր եւ նեղ լուսամուտներ, որոնք բացվում են կամարակապ վերջավորությամբ հարթ խորշերի կենտրոնով:

Տաճարի գլխավոր ճակատը ձեւավորված էր սլաքաձեւ կամարներով ուղղանկյուն հարթ խորշերով: Վանքական համալիրի հարավարեւմտյան անկյունում բարձրանում է դարպասի վրա կառուցված զանգակատունը, որի բարձր ծավալն ավարտվում է սյունազարդ ռոտոնդայով:

Թբիլիսիի հայկական եկեղեցիներից ամենահայտնին եւ հռչակվածը Մուղնու Ս. Գեւորգն է: Ըստ պատմիչ Զաքարիա Սարկավագի՝ եկեղեցին հիմնվել է 13-րդ դ. Աշտարակի մոտ Մուղնի գյուղի Ս.Գեւորգ վանքից մասունքների մի մասի Տփղիս տեղափոխվելու կապակցությամբ (վրաց արքայազնին բուժելու համար)[29]: Այս տեղեկությունը բերում է նաեւ Շարդենը[30]: Հարավային մուտքի արձանագրության համաձայն՝ եկեղեցին հիմնովին վերակառուցել է պարոն Ստեփանը 1754 թ.[31]: Այս իրադարձությանը Սայաթ - Նովան նույնիսկ հատուկ երգ է նվիրել[32]: Մուղնու Ս. Գեւորգ եկեղեցին նույնպես պատկանում է գմբեթավոր բազիլիկաների տիպին: Սակայն այստեղ, ի տարբերություն Հարանցվանքի տաճարի, գմբեթը բարձրանում է շենքի ընդհանուր ծավալի մեջտեղում, չորս խոշոր, գլանաձեւ մույթերի վրա (նման ձեւի հենասյուները հազվադեպ են Հայաստանի եկեղեցիներում): Կիսաշրջանաձեւ Ավագ խորանի երկու կողմում տեղադրված են փոքրիկ աբսիդներով ավանդատներ: Մուղնու Ս. Գեւորգ եկեղեցին ունի մի այլ առանձնահատկություն եւս. այստեղ Ավագ խորանի եւ ավանդատների աբսիդները ոչ թե ներառված են պատերի ուղղանկյուն եզրագծի մեջ, այլ դուրս են գալիս կիսաշրջան ծավալներով: Բյուզանդական ճարտարապետությանը բնորոշ այս ձեւը հավանաբար միջնորդված է Ս. Գեւորգ եկեղեցում վրացական ճարտարապետության ազդեցությամբ:

Քառամույթ գմբեթավոր բազիլիկաներ են նաեւ Թբիլիսիի Շամքորեցոց, Ս. Էջմիածին, Ս. Ստեփանոս, Ս. Հովհաննես Մկրտիչ, Ս. Կարապետ, Ս. Սարգիս, Կուկիայի Ս. Աստվածածին եւ ուրիշ հայկական եկեղեցիները, որոնց մեծ մասը կառուցվել է 18-րդ դ.: Նույն հորինվածքն ունենալով՝ այս եկեղեցիները միմյանցից տարբերվում են չափերով, հատակագծային եւ ծավալային լուծման մանրամասներով, հարդարանքով, եւ այս բոլորը նրանցից յուրաքանչյուրին չկրկնվող ճարտարապետական կերպար է հաղորդում:

---

29 «Զաքարեայ Սարկաւագի պատմագրութիւն», հ. 3, Վաղարշապատ, 1830, էջ 40:

30 **М. Полиевктов, Г. Натадзе**, նշվ. աշխ., էջ 17:

31 **П. М. Мурадян**, Армянская эпиграфика Грузии. Тбилиси, Ереван, 1988, с. 46.

32 **Սայաթ-Նովա**, ժողովածու, կազմեց Մ.Ս.Հասրաթյան, Երեւան, 1958, էջ 82:

Կուսանաց վանքի Ս. Սդեփանոս եկեղեցին կառուցվել է Քարափիթաղում 1727 թ. եւ վերակառուցվել սրբապաշ քարով 1868 թ.[33]: 12 նիստանի թմբուկով գմբեթը բարձրանում է չորս գլանաձեւ, զանգվածեղ մույթերի վրա: Թաղերը եւ կամարները շեշտված սլաքաձեւ են: Կիսաշրջանաձեւ խորանի երկու կողմում ուղղանկյուն հատակագծով ավանդատներն են: Ի տարբերություն Մուղնու Ս. Գեւորգ եկեղեցու՝ այստեղ արտաքուստ, շենքի ընդհանուր ծավալից դուրս է գալիս միայն Ավագ խորանը: Վերջին տարիներին եկեղեցին վերանորոգել են, վերացրել հայերեն արձանագրությունները եւ դարձրել գործող վրացական եկեղեցի:

Հավլաբարի Ս. Աստվածածին եկեղեցին, որն անվանվում է նաեւ «Կարմիր Ավետարան», կառուցվել է 1775 թ. աղյուսից եւ հիմնովին վերակառուցվել 1840-ական թթ. Շամքորից գաղթած հայ բնակիչների կողմից (այս պատճառով եկեղեցին ունի մի երրորդ՝ «Շամքորեցոց» անուն)[34]: Խոշոր աղոթասրահը (14 x 19 մ) արեւելքում ավարտվում է կիսաշրջանաձեւ խորանով, որի երկու կողմերում ուղղանկյուն հատակագծով ավանդատներն են (սրանցից հյուսիսայինն անմիջական մուտք ունի դեպի բեմ): Ուշագրավ է այստեղ ավանդատների երկրորդ հարկը, որն արեւմտյան պատի ամբողջ լայնությամբ, կամարակապ բացվածքով դուրս է գալիս դեպի աղոթասրահ՝ վերածվելով վերնահարկի:

Հսկայական բարձր գմբեթը 16 նիստանի թմբուկով բարձրանում է խոշոր, գլանաձեւ մույթերի վրա: Մուտքերը երեքն են (հյուսիսից, հարավից եւ արեւմուտքից): Բացի ուղղանկյուն, կամարակապ վերջավորությամբ մեծ լուսամուտներից բոլոր ճակատների վերին մասերում կան եւ կլոր պատուհաններ:

Շամքորեցոց եկեղեցին իր խոշոր չափերի, բարձր գմբեթի ու դիրքի շնորհիվ դարձել էր Հավլաբար թաղամասի կառուցապատման դոմինանտը եւ Թբիլիսիի հարավարեւելյան մասի ուրվագծի կարեւոր շեշտը (այսօր այն կիսավեր է):

Հավլաբարի այժմ գործող Ս. Էջմիածին եկեղեցին կառուցված է աղյուսից 1806-1809 թթ.[35]: Այստեղ եւս գմբեթակիր մույթերը գլանաձեւ են, իսկ ուղղանկյուն ավանդատներից հյուսիսայինը դուռ ունի դեպի Ավագ խորան: Սակայն նրանց երկրորդ հարկերը չեն բացվում դեպի դահլիճ եւ փաստորեն թաքստոցներ են: Արեւմտյան դուռը (եկեղեցին մուտքեր ունի նաեւ հյուսիսից եւ հարավից) բացվում է ուղղանկյուն մի նախամուտքի մեջ, որը շենքի ընդհանուր ծավալից դուրս է գալիս: Երկայնական պատերի լուսամուտները բավական խոշոր են (լայնությունը ներսից՝ 1,5 մ): Կան նաեւ կլոր պատուհաններ եւ խորշեր, իսկ արեւելյան ճակատը ձեւավորված է հատակագծում կիսաշրջանաձեւ զույգ խորշերով:

Կուր գետի ձախ ափին՝ բարձրադիր մի հարթակի վրա տեղադրված Ս. Կարապետ եկեղեցին հիմնադրվել է 1400 թ. եւ հիմնովին վերակառուցվել աղյուսից 1790 թ.[36]: Գմբեթակիր մույթերը քառակուսի են, անկյունները 45° թեքությամբ հատած: Գմբեթատակ քառակուսուց դեպի գմբեթ անցումն իրականացված է առագաստներով: Ուղղանկյուն հատակագծով ավանդատները արեւելքից ունեն նույնպես ուղղանկյուն խորշեր, որոնք աբսիդի դեր են խաղում: Գեղատեսիլ է եկեղեցու ուրվագիծը՝ գմբեթի 12 նիստանի սլացիկ թմբուկով եւ արեւմտյան ճակատի վրա բարձրացող զանգակատան խոշոր ռոտոնդայով, որը փաստո-

33 **Խ. Խուցյան**, Թիֆլիսի Ս. Սդեփանոս կուսանաց անապատի պատմութիւնը, Թիֆլիս, 1914, էջ 70:

34 **Ս. Մ. Мурадян,** Армянская эпиграфика Грузии, Тбилиси, с. 93.

35 Անդ, էջ 90:

36 **Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, էջ 268:

րեն երկրորդ գմբեթի դեր է խաղում: Այժմ Ս. Կարապետ եկեղեցին վերափոխված է գործող վրացական եկեղեցու: Նմանատիպ հուշարձաններ են 18-րդ դ. կառուցված, սակայն այսօր չպահպանված (քանդված են 20-րդ դ.) Ս. Հովհաննես Մկրտիչ, Կուկիայի Ս. Աստվածածին եւ Ս. Սարգիս հայկական եկեղեցիները[37]:

Քառամույթ գմբեթավոր բազիլիկայի հեստաքրքրական տարբերակն են հին Թիֆլիսի կենտրոնական (նախկին Երեւանյան) հրապարակից հարավ գտնվող Ս. Նշան, Նորաշեն Ս. Աստվածածին, Բեթղեհեմի Ս. Աստվածածին, Ջգրաշեն Ս. Աստվածածին (հին քաղաքի Հայկական փողոցում) եւ Զրկինյանց Ս. Գեւորգ (վերջին երկուսը քանդվել են) եկեղեցիները: Այս հուշարձաններում գմբեթը բարձրանում է ոչ թե դահլիճի մեջտեղում, չորս մույթերի վրա, այլ արեւելյան մույթերի եւ բեմի անկյունների վրա: Ինչպես եւ Հարանցվանքում, այս եկեղեցիների նավերը գրանսեպտով հատվում են խորանի առջեւ, այլ ոչ թե միջին թռիչքում: Բայց, ի տարբերություն Հարանցվանքի, որտեղ երեք նավերն էլ ունեին հավասար լայնություն, Նորաշեն, Ս. Բեթղեհեմ եւ Ս. Նշան եկեղեցիներում գլխավոր եւ կողային նավերի լայնությունների հարաբերությունը համապատասխանաբար կազմում է 1:1,8, 1:2 եւ 1:1, 25, այսինքն ունի Հայաստանի միջնադարյան գմբեթավոր բազիլիկաներին բնորոշ համաչափություններ: Եթե Հարանցվանքում երեք նավերը արեւելքում ավարտվում են խորաններով եւ ունեն առանձին երկթեք տանիքներ, ապա վերը նշված եկեղեցիներում խորանով ավարտվում է գլխավոր կենտրոնական նավը, որը տրանսեպտի հետ կազմում է շենքի վերին՝ խաչաձեւ մասը:

Ս. Նշան եկեղեցին, ըստ հյուսիսային մուտքի վերեւի շինարարական արձանագրության, կառուցել է Մելիք Գեւորգը 1703-1711 թթ.[38]: Նույն ճակատի երկու այլ արձանագրություններ հայտնում են գմբեթը 1780 թ. Ղազարի եւ հյուսիսային մուտքը 1781 թ.՝ Տեր-Նիկողոսի կողմից վերանորոգելու մասին[39]: Արեւելքից արեւմուտք ձգված աղոթասրահը (11 x 20,5մ չափերի) բաժանվում է երեք նավի՝ երկու զույգ ուղղանկյունավոր հատած անկյուններով մույթերով: Ավանդատներն ունեն կիսաշրջանաձեւ խորաններ, իսկ վերեւում՝ թաքստոցներ: 12 նիստանի թմբուկով գմբեթը բարձրանում է տրանսեպտի եւ միջին նավի հատման վրա: Երեք մուտք կա՝ հյուսիսից, արեւմուտքից եւ հարավից: Վերջինիս առջեւ կանգուն է երկհարկանի զանգակատունը: Աղյուսաշեն եկեղեցու պատերը դրսից զարդարված են հարթ զարդանախշերով, ավարտվում են սլաքաձեւ կամարներով:

Բեթղեհեմի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցված է Քարափիթաղում՝ Նարիկալա ամրոցի ստորոտում: Հիմնադրված լինելով 14-րդ դ. (մեզ է հասել այստեղ 1437 թ. գրված հայերեն ձեռագիր) եկեղեցին վերակառուցվել է 1746 թ.[40]: Այն ունի նույն հորինվածքը, ինչ Ս. Նշանը տարբերվելով միայն որոշ մանրամասներով (մույթերը ութանիստ են, միջին նավն ունի թաղակիր կամարներ, թեք տեղանքի պատճառով հարավից մուտքը չունի, ճակատները դրսից խորշեր չունեն): Ավանդատների երկրորդ հարկը, ինչպես Շամքորեցոց եկեղեցում, արեւմտյան պատի ողջ լայնությամբ բացվում է դեպի աղոթասրահ: Այսպիսի լուծումը, թեպետ սակավ, հանդիպում է պատմական Հայաստանի 17-րդ դ. այլ հուշարձաններում նույն-

37 Անդ, էջ 270:

38 **Ս. Ջալալեանց**, նշվ. աշխ., էջ 21:

39 Անդ:

40 **Ի .Մ. Мурадян**, Армянская эпиграфика Грузии. Тбилиси, с. 34.

պես (վերջին տարիներին քանդված Փառակայի Ս. Աստվածածին եկեղեցին Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունում, Նորագավթի եռանավ Ս. Աստվածածին բազիլիկան Երեւանում եւ այլն): 20-րդ դ. վերջին Բեթղեհեմի Ս. Աստվածածին եկեղեցին հիմնովին նորոգել են, վերացրել պատերի երեք տասնյակ հայերեն արձանագրությունները, 1501, 1679, 1711 թթ. խաչքարերը եւ դարձրել վրացական եկեղեցի:

Նրանից արեւելք, փոքր-ինչ հեռու, առանձին կանգնած է եռայարուս, դարպասի վրա աղյուսից կառուցած զանգակատունը (17-րդ դ.)՝ ութասյուն քարաշեն սյունազարդ գմբեթով:

Ջգրաշեն Ս. Աստվածածին եկեղեցին 1729 թ. հին Թիֆլիսի Արմյանսկայա փողոցում (քանդվել է 1930-ական թվականներին): Այն բավական խոշոր գմբեթավոր բազիլիկա էր (արտաքին չափերը՝ 14,6 x 24,0 մ), երկու զույգ ութանիստ մույթերով: Խորանի երկու կողմերի ավանդատները ուղղանկյուն են, եւ նրանցից հյուսիսայինը երկրորդ դուռ ունի բեմից: Խոշոր գմբեթը բարձրանում է արեւելյան որմնասյուների եւ Ավագ խորանի անկյունների վրա: Մուտքերը երեքն են՝ ընդերկայնական պատերում եւ արեւմտյան ճակատում: Աղոթասրահն առատորեն լուսավորվել է խոշոր պատուհաններից (նրանց լայնությունը դրսից 1,4 մ է): Կամարները եւ թաղերը շեշտված սլաքաձեւ են: Միջին նավի թաղի վերեւում՝ երկթեք տանիքի տակ, եկեղեցու երկարությամբ ձգվում է թունելանման թաքստոցը:

Նորաշեն Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1507 թ. եւ վերանորոգվել 1650, 1795 եւ 1808 թթ.[41]: Համարյա քառակուսի հատակագծով աղոթասրահը (լայնության եւ երկարության հարաբերությունը 1:1,2) երկու զույգ հզոր գլանաձեւ մույթերով (1,55 մ տրամագծով) բաժանվում է երեք թաղածածկ նավի: Այստեղ եւս գմբեթը դրված է արեւելյան մույթերի եւ Ավագ խորանի անկյունների վրա: Ավանդատներն ուղղանկյուն են, առանց աբսիդների: Արեւմտյան ճակատի վրա՝ երկթեք տանիքի գագաթին բարձրանում է թեթեւ, սյունազարդ զանգակատունը: Եկեղեցու ներսույթը 1793 թ. որմնանկարներով զարդարել է Հովնաթան Հովնաթանյանը[42]:

Գմբեթավոր բազիլիկաներ են եղել նաեւ 1930-ական թթ. քանդված Հրեշտակապետաց (1781 թ.) եւ Խոջիվանքի Ս. Աստվածածին (1655 թ.) եկեղեցիները:

Թբիլիսիի հայկական մի շարք եկեղեցիներ ունեն միանավ եւ եռանավ բազիլիկաների հորինվածք: Ս. Մինաս եկեղեցին (1790 թ.)[43] Հավլաբարում ուշ միջնադարի հայկական ճարտարապետության բնորոշ եռանավ բազիլիկա է՝ երկու զույգ մույթերով, երկու կողմերում ուղղանկյուն ավանդատներով, կիսաշրջանաձեւ աբսիդով: Բազիլիկաներ են նաեւ Ճուղուրեթի Ս. Աստվածածին (այժմ վերածված է վրացական եկեղեցու) եւ Ջորաբաշի Ս. Գեւորգ (1775 թ.)[44] եկեղեցիները: Վերջինս գտնվում է Կուր գետի ձախ, բարձր եւ զառիթափ ափի վերեւում, Հավլաբարի բնակելի շենքերի շարքում:

Քարափի Ս. Գեւորգ եկեղեցին (կոչվում է նաեւ «Խիխոյի ժամ») գտնվում է Քարափիթաղում, Բեթղեհեմի եկեղեցուց արեւելք: Այն փոքրիկ է, կառուցված 1753 թ., աղյուսից[45]:

---

41 Անդ, էջ 75:

42 **Մ. Ղազարյան**, Հայկական կերպարվեստը 17-18-րդ դդ.: Գեղանկարչություն, Երեւան, 1974, էջ 206:

43 **Լ. Մ. Մելիքսեթ - Բեկ**, նշվ. աշխ., էջ 268:

44 Անդ:

45 **Ս. Ջալալեանց**, նշվ. աշխ., էջ 72:

Դահլիճում երկայնական պատերին կից են երկու զույգ մույթեր, որոնք ստեղծում են խոր որմնախորշեր: Այսպիսի լուծումը 17-18-րդ դդ. հատուկ էր հարավային Սյունիքի նույնատիպ եկեղեցիներին: Ս. Գեւորգ եկեղեցում խորշերը ծածկող կամարները խիստ սլաքաձեւ են, գետնահար համաչափություններով: Վերջին տարիներին այն դարձրել են գործող վրացական եկեղեցի:

Պետք է նշել, որ Թիֆլիսի 17-րդ դ. որոշ հայկական եկեղեցիներին (Ս. Նշան, Քարափի Ս. Գեւորգ, Հարանցվանք, Բեթղեհեմի զանգակատուն) բնորոշ է ուշ միջնադարի իրանական դեկորատիվ արվեստի որոշ տարրերի կիրառումը ճակատների ձեւավորման մեջ (այս երեւույթը հանդիպում է նաեւ պատմական Հայաստանի Գողթան, Երնջակ, Արեւիք գավառների, ինչպես նաեւ 17-18-րդ դդ. Արեւելյան Վրաստանի եկեղեցիներում):

Իսկ մի քանի հայկական եկեղեցիներն էլ՝ կառուցված Թիֆլիսում 18-րդ դ. կամ վերակառուցված 19-րդ դ., ունեն ռուսական կլասիցիզմին բնորոշ հարդարանքի տարրեր (Նորաշեն, Շամքորեցոց, Ս. Մինաս): Սակայն ինչպես դրանք, նույնպես եւ իրանական արվեստի տարրերը հայ ճարտարապետները կիրառել են ստեղծագործաբար՝ զուգակցելով ազգային արվեստի դեկորատիվ ու կառուցողական ձեւերի հետ եւ համաձայն իրենց ստեղծագործական խնդիրներին:

Ընդհանուր առմամբ, Թիֆլիսի հայկական եկեղեցիների ճարտարապետական-գեղարվեստական լուծումները մարմնավորում են Հայաստանի շինարարական արվեստի ավանդները: Ոճական որոշ նորամուծությունները (հիմնականում կապված որպես շինանյութ աղյուսի կիրառման հետ) չեն ազդել այդ եկեղեցիների հորինվածքային մտահղացումների ամբողջականության վրա. նրանց ճարտարապետությունը ինքնուրույն ձեւավորվել է որպես բնականոն զարգացման արդյունք: Դրան նպաստել են այնպիսի գործոններ, ինչպիսիք են Թիֆլիսում հայ բնակչության գերակշռությունը, Մայր Հայաստանի մոտիկությունը եւ նրա հետ հոգեւոր ու նյութական մշակույթի սերտ կապերի պահպանումը (Ասիայի, Եւրոպայի եւ Աֆրիկայի հայկական բազմաթիվ գաղթօջախներից սա ամենամոտն էր հայրենիքին):

Սակայն Թիֆլիսի հայկական եկեղեցիների կարեւոր նշանակությունը, բացի հայապահպանությունից եւ վրացական հողում ազգային արվեստի նվաճումների կիրառումից, նաեւ հայ ճարտարապետության համար հորինվածքային նորույթների ստեղծումն էր (եռագմբեթ բազիլիկա, Ավագ խորանի առջեւ տրանսեպտի տեղադրում եւ այլն) եւ արտաքին հարդարանքում նոր զարդաձեւերի կիրառումը: Այս բոլորի շնորհիվ Թիֆլիսի հայկական եկեղեցիների ճարտարապետությունը հայ մշակույթի պատմության հետաքրքրական էջերից մեկն է: